

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ  
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2017

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ**

**ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ**  
**(Периодический сборник научных статей)**

**№ 13**

**Ереван**  
**Издательство ЕГУ**  
**2017**

**YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF ORIENTAL STUDIES**

**JOURNAL OF ORIENTAL STUDIES  
(scholarly periodical journal)**

**№ 13**

**YEREVAN  
YSU PRESS  
2017**

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
արևելագիտության ֆակուլտետի  
գիտական խորհրդի որոշմամբ**

**Խմբագրական խորհուրդ՝**

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր (*նախագահ*),  
Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն  
պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ  
թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր,  
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ-  
անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն  
պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր,  
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ  
ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով  
Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան  
Վահրամ պ.գ.թ., Բեյլենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր  
(Ռուսաստան), Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ), Գրեկյան  
Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր  
(Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր  
(Ուզբեկստան)

**Մելքոնյան Մարիամ<sup>1</sup>**

**15-16-ԲԴ ԴԱՐԵՐԻ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԻՆ ԳՐՈՂՆԵՐԻ  
ՊՈԵԶԻԱՅՈՒՄ ԱՌԿԱ ԱՌԻՖԻԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

Իսլամական միստիցիզմն (սուֆիզմ)<sup>2</sup> իբրև կրոնափիլիսոփայական աշխարհայացք, գաղափարական առումով վերջնականապես ձևավորվել է 9-10-րդ դարերում<sup>3</sup>, դառնալով Արևելքն ու Արևմուտքը, իսլամական և քրիստոնեական աշխարհները մերձեցնող եզրերից<sup>3</sup>: Թեև իսլամում սուֆիզմի հիմնական գաղափարը հոգու պայծառացման միջոցով Աստծո հետ իռացիոնալ շփումն է, այնուհանդերձ, այն առանձնանում է իր գաղափարական բարդությամբ՝ հակված լինելով դեպի օրթոդոքսալ իսլամը և ներառելով տարրեր այնպիսի կրոնափիլիսոփայական կատեգորիաներից՝ ինչպիսիք են նեոպլատոնիզմն ու գնոստիցիզմը<sup>4</sup>:

Սուֆիական գաղափարները դեռևս սկզբնավորման և ձևավորման շրջանում լայն տարածում ունեին ինչպես վերնախավում, այնպես էլ ժողովրդական շրջանակներում, քանի որ սուֆիները թափառում էին միջնադարյան արևելյան

<sup>1</sup> ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի ասպիրանտ, e-mail: mariam.melkonyan@ysu.am

<sup>2</sup> Бертельс Е. Э., Суфизм и суфийская литература, избранные труды, т. 3, Москва 1965, с. 39, ինչպես նաև Брагинский И., С., Из истории таджикской и персидской литератур, Москва, 1972, стр. 432-433.

<sup>3</sup> Կոզմոյան Ա., Հայոց և պարսից միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկան (10-16-րդ դարեր), Երևան, 1997, էջ 64:

<sup>4</sup> Из старой турецкой поэзии, Составление И. Боролиной, Москва, 1978, с. 262.

քաղաքներում և զբաղվում քարոզչությամբ<sup>5</sup>: Մա պատճառ դարձավ, որ սուֆիզմն իր արտահայտումը գտնի արևելյան գրականության մեջ, քանի որ վերջինս հնարավորություն էր տալիս ավելի մատչելի դարձնել ժողովրդական շրջանակներում այս գաղափարների քարոզումը<sup>6</sup>: Այդ մասին թուրք գրականագետ Ա. Ս. Լևենդը մասնավորապես գրում է. «Սուֆիական գրականության նպատակը չի եղել նոր ոճով գեղարվեստական կերպարներ կերտելը, այլ ձգտում է զուտ գեղարվեստական գործի միջոցով փոխանցել սուֆիական փիլիսոփայությունը»<sup>7</sup>:

Նոր ժանրերի, տաղաչափական կանոնների որոնման ճանապարհին սուֆի շեյխերն առաջին հերթին դիմեցին պարսկական ժողովրդական գրականության ավանդույթներին, ապա ժանրեր փոխառեցին արաբական պոեզիայից: Ձեռք բերելով հատուկ ձև և ոճ՝ սուֆիական գրականությունը ոճական, թեմատիկ և ժանրային առումով ստացավ կաղապարված, «քարացած» բնույթ, որը, որպես գրական կանոն, պարտադրվում էր ստեղծագործողին<sup>8</sup>: Մասնավորապես սուֆիական պոեզիային բնորոշ է սիմվոլների կիրառումը, որը ստեղծագործությանը հաղորդում է այլաբանական իմաստ, իսկ որպես հիմնական գրական թեմատիկա հանդես է գալիս սերը: Սուֆիական պոեզիայի հիմքում ընկած է արարչագործության գաղափարը,

<sup>5</sup> Կոզմոյան Ա., Հայոց և պարսից միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկական (10-16-րդ դարեր), Երևան, 1997թ., էջ 82:

<sup>6</sup> Bilgin A., Tasavvuf ve Tekke Edebiyatı, s. 64, [http://ktp.isam.org.tr/pdfdrgr/D01445/1995\\_1/1995\\_1\\_BILGINA.pdf](http://ktp.isam.org.tr/pdfdrgr/D01445/1995_1/1995_1_BILGINA.pdf)

<sup>7</sup> Levend A. S., Divan Edebiyatı: Kelimeler ve Remizler, Mazmunlar ve Mefhumlar, 4. Basım, İstanbul, 1984, s. 109:

<sup>8</sup> Սաֆարյան Ալ., Գրիգոր Նարեկացու ու սուֆի բանաստեղծների ստեղծագործություններում ավանդական պատկերների «ադապտացման» մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, ՀՀ ԳԱԱ, 1993, թիվ 2, էջ 103:

համաձայն որի Ալլահը սեփական գեղեցկությունը տեսնելու և ցույց տալու համար ստեղծել է աշխարհն ու նրա ամենաարժեքավոր գոյը՝ *Մարդուն*: Ուստի մարդու միակ նպատակը պիտի լինի՝ *Բացարձակ Միակության (Vücut-i Mutlak), Բացարձակ Կատարելության (Kemâl-i Mutlak), Բացարձակ Գեղեցկության (Hüsn-i Mutlak)*, այսինքն Ալլահի հանդեպ երկնային սիրուն ձգտելը (*işk-i hakiki*), որին հասնելու կամուրջը համարվում է երկրային՝ մարդկային, սերը (*işk-i macazi*)<sup>9</sup>:

15-16-րդ դարերում օսմանյան գրականության մեջ արմատավորված սուֆիական ուղղությունը լայնորեն արտահայտվում է նաև կին գրողների պոեզիայում: Հետևելով ժամանակի գրական ավանդույթներին՝ օսմանյան բանաստեղծուհիներն իրենց գործերում մեծ չափով օգտագործել են սուֆիական սիմվոլիկան՝ արտահայտելով Աստծո հանդեպ ունեցած վերացական սիրո գաղափարը<sup>10</sup>: Այն վառ արտահայտված է օսմանյան առաջին կին գրող<sup>11</sup> Ջեյնեփ Հաթունի (... - 1474 թ.) ստեղծագործություններում: Վերջինս գրել է ժամանակի գրական ոգուն համապատասխան՝ իր պոեզիայում մեծ տեղ հատկացնելով սուֆիական գաղափարաբանությանը:

---

<sup>9</sup> Hakverdioğlu M., 15. yüzyılda bir kadın hakları savunucusu: Mihri Hatunç Hayatı, Şahsiyeti ve Divanı, Amasya, 2007, s. 563, ինչպես նաև տե՛ս Рипка Ян, История персидской и таджикской литературы, Москва, 1970., с. 225.

<sup>10</sup> Սուֆիական սիմվոլիկայի մասին առավել մանրամասն տե՛ս Османов М., Стиль персидско-таджикской поэзии IX-X вв., Москва, 1974, стр. 266-299.

<sup>10</sup> Սուֆիական սիմվոլիկայի մասին առավել մանրամասն տե՛ս Османов М., Стиль персидско-таджикской поэзии IX-X вв., Москва, 1974, стр. 266-299.

<sup>11</sup> Bekiroğlu N., Osmanlıda Kadın Şairler, Ocak 2, 2000, <http://www.nazanbekiroglu.com/2000/01/02/osmanlida-kadin-sairler/>

Ձեյնեփ Հաթունի ստեղծագործություններն ամբողջովին չեն պահպանվել. օսմանյան կենսագիրների վկայությունների շնորհիվ<sup>12</sup> հայտնի են նրա գազելներից փոքրածավալ հատվածներ, որոնք, նվիրված լինելով վերացական սիրո գաղափարին, աչքի են ընկնում յուրահատուկ սուֆիական սիմվոլների կիրառմամբ և նվիրված են աստվածային սիրո գովաբանմանը: Կենսագիր Լաթիֆի թեգքերում տեղ գտած գազելներից մեկում Ձեյնեփը աշխարհը համարում է պարզ, անփայլ, կոչ է անում քաջություն ունենալով հրաժարվել աշխարհիկ զարդերից (հաճույքներից), փոխարենը թեկուզև տանջալից սիրո միջոցով ձգտում է հասնել *Միրեյիին (Habîb)*՝ Աստծուն: *Keşf et nikâbını yer ü göğü münevver et/Bu âlem-i anâsırı Firdevs-i enver et/İki cihanda kılmamışım nesneye hemin/Yârab Habîbinün bana vaslın müesser et/Depret lebini cûşa getir Havz-ı Kevseri/Anber saçını çöz bu cihâni muanber et/Yârâ yolunda aşk ile derdinden öleni/Kim der sana ki hecr ile cânun mükedder et/Hattun berât yazdı sabâ'ya dedi ki tîz/Var milket-i Hitâ ile Çin'i müsahhar et/Âb-ı hayât olmayıcak kısmet ey gönül/Bin yıl gerekse Hızr ile seyr-i Skender et/Zeyneb ko meyli zînet-i dünyâya zen gibi/Merdâne vâr sâde dil ol terk-i ziver et*<sup>13</sup> - *Բաց արա՛ք քողդ, երկրին ու երկնքին ցույց տու՛ր, /Այս պարզ աշխարհը փայլող Դրախտ դարձրու: /Երկու աշխարհում այս բանը չեմ արել, /Տե՛ր Աստված, ինձ Միրեյիին հասցրո՛ւ: /Շարժի՛ր շուրթերդ, Դրախտի Ավազանի ոգևորությունը հասցրո՛ւ, /Համպար մազերդ արձակի՛ր, այս աշխարհն անուշաբույր դարձրո՛ւ: /Դժվարին ճայնապարհին քո սիրուց ու վշտից մահացողը, /Ո՛վ է ասում քեզ՝ հեռանալով կյանքդ վշտալի դարձրո՛ւ: /Տիկիներ բերաթ գրեց, զեփյուռին ասաց. «արա՛գ» /Մինչև Չին աշխարհի երկրները գրավի՛ր: /Հէ՛յ, սի՛րտ, եթե կենսատու ջուր*

<sup>12</sup> Tezkire-i Lâtifi, İstanbul, 1314 (1927), s. 178-179.

<sup>13</sup> Նույն տեղում, ինչպես նաև Koprülü M. F., Yeni Osmanlı tarih-i edebiyatı, İstanbul, Şirket mertebiyeye matbaası, 1332 (195)4, s. 214-215.



*չի լինելու, ուրեմն ճակատագիր է./Հազար տարի էլ պետք լինի Մարգարեի ու Բսփենդերի ճանապարհն անցի՛ր։/Զեյնե՛փ, դու մի կնոջ նման հակված ես դեպի այս աշխարհի զարդերը, /Քաջի նման մաքուր սիրտ եղի՛ր, զարդն ու զարդարանքը թո՛ղ։*

Սուֆիական բնույթի գեղարվեստական գործերում գրողը հաճախ դիմում է Ղուրանի կերպարներին՝ վերջիններիս դարձնելով այլաբանորեն արվող համեմատության յուրահատուկ սիմվոլ։ Զեյնեփի քասիդներից մեկում հանդիպում ենք մարդկային գեղեցկության իդեալ համարվող Յուսուֆին (Հովսեփին)՝ Ղուրանի 12-րդ սուրայից<sup>14</sup>։ Այստեղ բանաստեղծուհին վերջինիս համարում է Աստծո գեղեցկության արտացոլանք<sup>15</sup> և դրանով փորձում արտահայտել իր հավերժական սերն Ալլահի հանդեպ. **Şehâ bu suret-i zîbâ sana Hakdan inâyetdür/Sanasın Sure-i Yusuf cemalünden bir âyetdür/Senün hüsnün benim aşkım seni cevrün benim sabrım/Demâdem artar eksilmez tükenmez bî nihâyetdür**<sup>16</sup>. - Ո՛վ շահ, այս գեղեցիկ դեմքը քեզ Աստծուց է շնորհված./Հովսեփի դեմքը քո գեղեցկության արտացոլանքն է։/Քո գեղեցկությունն ու իմ սերը, քո տանջանքն ու իմ համբերատարությունը./Երբեք չեն կործանվի կամ ընդհատվի, այլ կաճեն հավերժ։

Եթե Զեյնեփ Հաթունի պոեզիայում սուֆիական գաղափարների արտահայտումն ակնհայտ է, ապա ժամանակի ամենահայտնի կին գրող Միհրի Հաթունի ստեղծագործություններում այս առումով հանդիպում ենք երկիմաստության։ Դժվար է միանշանակ նշել. արդյո՞ք Միհրին

<sup>14</sup> Halman T. S., A Millennium of Turkish Literature (A Concise History), Republic of Turkey, p. 76. <http://www.tedaproject.com/EN/dosya/2-5943/h/amillenniumofturkishliterature.pdf>

<sup>15</sup> Османов М., там же, с. 194.

<sup>16</sup> Banarlı N. S., Resimli Türk Edebiyatı Tarihi, c.1, İstanbul, 2004, s. 453.

եղել է սուֆիական գաղափարի կրողն՝ իր ուղիղ կրոնափիլիսոփայական իմաստով, թե՞ վերացականի փոխարեն արտահայտել է երկրային սիրո գաղափարը՝ հետևելով աշխարհիկ սիրային քնարերգության ավանդույթներին: Այս առումով թուրք, եվրոպական և ռուսաստանյան գիտնականների կարծիքները բավականին հակասական են: Մի շարք ռուսումնասիրողներ, ինչպես օրինակ թուրք գրականագետ Ֆ. Ռեշադը, գտնում են, որ Միհրիի ստեղծագործությունները ողողված են կրոնական, բարեպաշտական գաղափարներով, իսկ նրա ողջ քնարերգությունը պետք է հասկանալ անուղղակիորեն, քանի որ բանաստեղծուհու նկարագրած սիրային հաճույքներն իրականում պլատոնական բնույթ են կրում<sup>17</sup>: Մեկ այլ թուրք գրականագետ Մ. Հաքվերդիօղլուն գտնում է, որ աստվածային սիրո գաղափարը Միհրիի պոեզիայի ստեղծագործությունների, հատկապես գագելների հիմնական թեման է: Սակայն նա նշում է, որ Միհրին սուֆի գրող չէ, նա սուֆիզմին վերաբերում է որպես արվեստի<sup>18</sup>: Ի հակադրություն այս կարծիքի հայտնի արևելագետ Վ. Ա. Գորդլևսկին գտնում է, որ, չնայած կրոնական սահմանափակումներին, Միհրիի՝ սիրային թեմատիկային նվիրված ստեղծագործությունները աչքի են ընկնում առավել համարձակ բնույթով: Նա մասնավորապես գրում է. «Երջանկության հաճույքի մեջ Միհրի Հաթունին համակում է հուսահատության տանջանքը: Իսլամը կապել է նրան, հասարակությունը՝ վանդակում դատապարտել մեկուսացման, իսկ Միհրին կտրել է այդ կապերը, նա ջերմեռանդորեն երգել է

<sup>17</sup> Михри-Хатун. Диван, Критический текст и вступительная статья Е. И. Маштаковой, Москва, с. 24.

<sup>18</sup> Hakverdioğlu M., a.g.e., s. 83-84.

սիրո մասին...»<sup>19</sup>: Նմանատիպ տեսակետի ենթ հանդիպում նաև թուրք բանաստեղծուհի և գրականագետ Ս. Մեզերի մոտ: Վերջինս Միհրիին անվանում է թուրքական «Սաֆո»<sup>20</sup>՝ նշելով, որ նրա ստեղծագործություններում վառ կերպով արտահայտված են սիրո պատճառած ցավը, տանջանքն ու հաճույքները: Այս առումով խորհրդային գրականագետ Ի. Մաշտակովան, ով ուսումնասիրել և հրատարակել է Միհրիի ստեղծագործությունների Դիվանը, գրում է. «Նրան շատ դժվար է հասկանալ, քանի որ Միհրիի բանաստեղծություններում արտահայտված մտքերը բազմիցս իրար հակասում են: Այն տպավորությունն է՝ կարծես դրանք մեկ մարդ չի գրել»<sup>21</sup>:

Այնուհանդերձ հարկ է նշել, որ Միհրիին չէր կարող ամբողջությամբ խուսափել ժամանակի գրական ավանդույթներից, որտեղ նշանակալից դեր ուներ սուֆիական ուղղությունը: Միհրիի Դիվանում կարևոր տեղ զբաղեցնող «Աղերսագիր» (**Tazarru'-nāme**) մերսիեն<sup>22</sup> և գազելների<sup>23</sup> ժողովածուում (**gazeliyāt**) տեղ գտած մի

---

<sup>19</sup> Гордлевский В. А., «Женская доля», Избранные сочинения, т. 3, Москва, 1962, с. 151.

<sup>20</sup> Սաֆո – Հույն հայտնի կին գրող, ով ավանդության համաձայն սիրահարված էր Աֆրոդիտեին: Օսմանյան գրականության մեջ Սաֆո անունը տրվել է Միհրիին, քանի որ վերջինս մերժել է ամուսնության առաջարկները, հրաժարվել է երկրպագուների ընկերակցությունից և հաճախ իր ստեղծագործություններում գովերգել է կանացի գեղեցկությունը: Առավել մանրամասն տե՛ս Sezer S., Türk Safo'su Mihri Hatun, Istanbul, 2005, s. 8, Tekin Y., Mihri Hatun – Divanda Bir Afet-i Devran, <http://hafif.org/yazi/mihr-hatun-divanda-bir-afet/>

<sup>21</sup> Михри-Хатун. Диван, с. 25.

<sup>22</sup> Մեսնեվի – դիվանի գրականության չափածո ստեղծագործության ժանրերից մեկն է, բաղկացած է երկտողերից (բեյթերից): Առանձնանում է իր ծավալուն բնույթով: Մեսնեվիները գրվել են սիրային, կրոնական, սուֆիական, պատմական, ռազմական, կատակերգական, գիտական և

շարք գործեր, նվիրված են կրոնական և սուֆիական գաղափարաբանությանը:

Իր գազելներից մեկում բանաստեղծուհին կոչ է անում հրաժարվել երկրային անցողիկ հաճույքներից, փոխարենը՝ ձգտել հավերժական սիրուն ու գեղեցկությանը<sup>24</sup>. **Âklısın sen bu dünyā dostlerinden çek alevin/Dünyā gı̃bī bī vefādır bārī bir yārārın ön/Bū fenā alemde had ū hāla kalma itibār/Ol bakâ mülkünde bākī hübların dīdareyn ön**<sup>25</sup> - *Եթե դու խելացի ես, հեռացի՛ր այս աշխարհի ընկերներից, /Նրանք աշխարհի նման հավերժ չեն, փա՛ռք միակ արժանավորին: /Այս վատ աշխարհում ուշադրություն մի՛ դարձրու այտին ու խալին, /Փա՛ռք հավերժ գեղեցիկի հետ հանդիպմանը այն հավիտենական աշխարհում:*

Մեկ այլ գազելում Միհրին հանդես է գալիս որպես դժվարին սիրո ճանապարհը բռնած սիրահար սոխակ. **Gülşen-i hüsnî kenārın tıttı Mihrihıttı-ı yār/Bülbülün tāze gülistānında zağ olmak ne güç**<sup>26</sup>- *Գեղեցիկ վարդաստանի անկյունով Միհրին բռնեց սիրելիի ճանապարհը, Նորաբաց վարդաստանում սոխակի համար ազոավ լինելն ինչ ուժ է:*

Միհրիի գազելներում հանդիպում են հաճախ կիրառվող այնպիսի սիմվոլներ, ինչպիսիք են՝ gonca - կոկոն, leb- շրթունք (Ալլահի խոսք), gül - վարդ (սիրահար), lāle - վարդակակաչ, çeşm - աչք, ruh- այտ (Ալլահի լույս), zebān-ı şīrīn - քաղցր լեզու (Ալլահի

---

այլ թեմատիկաների շրջանակներում: Առավել մանրամասն տե՛ս Pala İ., Divan Edebiyatı, 19. Basım, İstanbul, 2017, ss. 60-62:

<sup>23</sup> Գազել – դիվանի գրականության մեջ ամենամեծ տարածումն ունեցող չափածո ժանրն է, բաղկացած է 5-12 բեյթերից: Գազելները հիմնականում գրվել են սիրային թեմատիկայի շրջանակներում: Առավել մանրամասն տե՛ս Pala İ., a.g.e., s. 58-60:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 24-25:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 99:

հրաման) և այլն: Այս եզրերը հնարավորություն են տալիս նկարագրել սիրեցյալի գեղեցկությունը՝ ցույց տալով աստվածային սիրո կատարելությունն ու դրան հասնելու տանջանքն ու դժվարությունները: Այս տեսակ տերմինների վարպետորեն կիրառմամբ է առանձնանում Միհրիի հետևյալ գագելը. **gönlüm zevrağın aldı bugün bir gonce leb gül ruh/Yaşum deryasına şaldı bugün bir gonce leb gül ruh** - *Իմ սիրտը, որ քո գավաթն է, վերցրեց այսօր մի կոկոն շրթունք, վարդ հոգի, Այսօր կյանքիս վիշտը բորբոքեց մի կոկոն շրթունք, վարդ հոգի.....* **Belâ-keş bülbülüm bildi figânumdan şafâ buldı/ Yüzüme gül gibi güldi bugün bir gonce leb gül ruh** - *Բնացավ, որ տանջվող սոխակ եմ, իմ վշտից հանգիստ գտավ, Այսօր վարդի նման դեմքիս ծիծաղեց մի կոկոն շրթունք, վարդ հոգի.....* **Alup şîrin zebân ile elinden Mihrinüñ varın/Ahâ geldüm didi yeldi bugün bir gonce leb gül ruh**<sup>27</sup>. - *Քաղցր լեզվով Միհրիի ձեռքից վերցնելով եղածը, Ասաց՝ ահա շտապով եկա, մի կոկոն շրթունք, վարդ հոգի:* Այս գագելն առանձնանում է նաև իր գեղեցիկ հանգավորմամբ: Բանաստեղծուհին, ով աչքի է ընկնում իր ստեղծագործությունները բառերով զարդարելու տաղանդով, կարողանում է սուֆիական սիմվոլները կիրառել ոչ միայն ստեղծագործություններին այլաբանական իմաստ հաղորդելու, այլ նաև վերջիններս գեղեցկացնելու և զարդարելու նպատակով:

Միհրին ևս Ձեյնեփ Հաթունի նման երբեմն դիմել է Ղուրանի պատմություններում հիշատակվող կերպարներին: Նրա գագելներից մեկում հանդիպում են պարսկական դիցաբանությունից Ղուրան անցած Հարուն և Մարուն անուններով հրեշտակների կերպարները, ովքեր, ավանդության համաձայն, Աստծուց խնդրելով և ստանալով մարդու նման զգալու

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 99-100:

ունակություն, առաջին հերթին ենթարկվում են կանացի գայթակղությանը և սիրահարվում<sup>28</sup>: Մուֆիզմում նրանց անունները ստացել են կախարդանքին, գայթակղությանը, կանացի գեղեցկությանն ու հմայքին տրվելու իմաստ. **‘İlm-i cāzūlukda bir üstāddur çeşmüñ senüñ/Görse Hārūt ile Mārūtı geçerd’anlara bend<sup>29</sup> - Հմայքի գիտության մեջ քո աչքը վարպետ է, Եթե տեսնեն Հարունի ու Մարունի անցյալի կախարդող աչքերը:**

Որոշ գազելներում Միհրին իրեն համեմատում է Յուսուֆին սիրահարված Ջուլեյհայի հետ: Վերջինս Աստվածաշնչում և Ղուրանում ներկայացվում է խիստ բացասական գույներով, ինչի պատճառով աստիճանաբար Ջուլեյհայի անունը նույնացվել է անբարո կնոջ կերպարի հետ: Մինչդեռ սուֆիզմում Ջուլեյհայի կերպարը փոխակերպվելով մեղսագործ կնոջից վերածվել է մարդկային անպատասխան սիրո տանջանքը ճաշակած և դրա միջոցով կատարյալ ու ճշմարիտ սիրուն ձգտող խորհրդանիշի: Միհրին իր և Ջուլեյհայի միջև անցկացվող համեմատությունն օգտագործում է Հովսեփի գեղեցկությանը նմանվող աստվածային սիրո կատարելությունը նկարագրելու նպատակով. **Nev-civān itdi Züleyhā gibi Mihri seni ‘aşk/Kılanır luṭf ile Yūsuf nazarın şāh saña - Միհրի՛, սերը քեզ Ջուլեյհայի նման երիտասարդ դարձրեց, Յուսուֆը գեղեցկությամբ հայացքդ քեզ համար շահ կդարձնի:**

Սուֆիզմն իր սիմվոլիկայով հնարավորություն էր տալիս մնալ իսլամի շրջանակներում՝ միաժամանակ հեռանալով

<sup>28</sup> W. St. Clair Tisdall, The Original Sources Of The Qur'an, Its Origin In Pagan Legends and Mythology, [https://www.whitehorsemedia.com/docs/THE\\_ORIGINAL\\_SOURCES\\_OF\\_THE\\_QURAN.pdf](https://www.whitehorsemedia.com/docs/THE_ORIGINAL_SOURCES_OF_THE_QURAN.pdf), ինչպես նաև Sezer S., a. g. e., s. 176.

<sup>29</sup> Михри-Хатун. Диван, с. 101.

նրանից<sup>30</sup>: Շատ դեպքերում սուֆիական սիմվոլիզմն ընդամենը միջոց էր պոետի, այդ թվում նաև իր յուրօրինակությամբ մյուս բանաստեղծուհիներից առանձնացող Միհրիի համար, կրոնական քողի ներքո սեփական ասելիքն արտահայտելու նպատակով: Թերևս այդ է պատճառը, որ իսլամական տերմինաբանությամբ հարուստ գործերում նա ավելի շատ խոսել է երկրային սիրո մասին, քան արտահայտել է սուֆիական գաղափարներ: Այդ են վկայում բանաստեղծուհու այն գազելները, որտեղ Միհրիին սիրային քնարերգության մեջ փորձել է ներկայացնել մարդկային անկեղծ զգացմունքներ՝ տանջանք, վիշտ և ուրախություն՝ միաժամանակ ստեղծագործությունը զարդարելով սուֆիական պատկերներով<sup>31</sup>. **Âşkın sanemâ çûn yed-i kudret dile yezdî/Bâşûma belâ û gam û hecrin bile yezdî/Sen gunçe dehen-i gül gibi yüzüme gelince/Cân bülbülü bu hâr-ı cefâdan evvelâ yezdî**<sup>32</sup> - *Միրո կուռքը ուժեղ ձեռքի նման սիրտը սեղմեց/Դժբախտություն, թախիժ ու անգամ բաժանում բերեց գլխիս/Երբ դու կոկոն վարդ շուրթերովդ հպվեցիր դեմքիս/Կյանքը սոխակին այս փշոտ աշխարհից առաջ գցեց*: Այս տողերում հատկանշական է սիրահարին և սիրեցյալին տրվող սուֆիական ամենահայտնի բնորոշումների կիրառման՝ մասնավորապես սիրեցյալին կոկոն վարդի (**dehen-i gül**), իսկ սիրահարին սոխակի (**bülbül**) հետ համեմատելու ավանդույթը:

Միհրիին Սուֆիական սիմվոլիզմն օգտագործում է վարպետորեն ստեղծված յուրատեսակ բառախաղով գազելը զարդարել նպատակով. **Gördüler leyla saçın bendinde mecnûn**

<sup>30</sup> Бертельс Е. Э., там же, с. 81.

<sup>31</sup> Михри-Хатун. Диван, с. 26.

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 234:

**gönlümü/Ehl-i diller Leyla û Mecnûn divânen bağladî**<sup>33</sup> - *Քո գիշերվա պես սև վարսերի հանգույցի վրա իմ սիրահար հոգին են տեսել/Եվ սիրահարները Լեյլայի ու Մեջնունի դիվանն են հորինել:*

Այստեղ առաջին տողում **leyla** (գիշեր) և **mecnûn** (սիրուց խելագար) բառերն օգտագործված են իրենց ուղիղ իմաստով, իսկ երկրորդ տողում՝ որպես հատուկ անուններ՝ վերցված «Լեյլա և Մեջնուն» արևելյան հայտնի սիրային լեգենդից:

Այնուամենայնիվ նշենք, որ Միհրին շատ դեպքերում արտահայտելով իր ժամանակի համար բավականին համարձակ մտքեր, անզամ դեմ է դուրս եկել կրոնական դոգմաներին, որոնք սահմանափակում էին ստեղծագործական ազատությունը: Նա բացահայտ քննադատական տողեր է գրել՝ ուղղված կրոնազետ-իրավազետներին՝ **Bu gün korkutma sen nasih-i cehimin ârta nârından,/Kerm kil bâşım âğartma ku kil u kâlfî bir**<sup>34</sup>. - *Օ՛, իրավազե՛տ, մի վախեցրու՛ այսօր վաղվա դժոխային կրակով/Գթություն արա՛, մի՛ հոգնեցրու ինձ, գոնե մի պահ հանգիստ թող:* Նույն կերպ հանդիմանում է նաև սուֆի գործիչներին. **Sûfi katında hûbları sevmek günah ise/Sen fâriğ ol ku ben yanâyın ol günahdan**<sup>35</sup>. - *Սուֆի՛, եթե ըստ քեզ գեղեցիկին սիրելը մեղք է/Ապա հեռացի՛ր, թող, որ ես այրվեմ այդ մեղքից:*

Այսպիսով հարկ է նշել, որ սուֆիական ուղղությունը, որը 15-16-րդ դարերում լայնորեն տարածված էր օսմանյան գրականության մեջ, մեծ չափով արտահայտում է գտել այդ շրջանում ստեղծագործած կին գրողների պոեզիայում: Չնայած տարատեսակ և իրարամերժ գիտական կարծիքների, սուֆիական մոտիվները հանդիպում են նաև ժամանակի ամենահայտնի օսմանյան բանաստեղծուհի Միհրի Հաթունի գործերում: Ուշագրավ

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 47:

<sup>34</sup> Նույնտեղում, էջ 35:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 36:



---

Է այն հանգամանքը, որ հաճախ Միհրի Հաթունի համար սուֆիական այլաբանությունն ընդամենը միջոց էր՝ գաղափարական անազատության պայմաններում կրոնական քողի ներքո սեփական զգացմունքներն արտահայտելու համար:

**SUFISTIC IMAGES IN THE WORKS OF THE OTTOMAN  
FEMALE WRITERS OF THE 15TH-16TH CENTURIES: GENERAL  
REVIEW  
(Summary)**

*Melkonyan Mariam*

Sufism, the Islamic mysticism, is based on the formula of the irrational contact with God through the enlightenment of the soul. At the same time, it stands out for its ideological complexity being prone to the “orthodox” Islam and comprising elements from different religious philosophical categories. The Sufistic direction enrooted in the Ottoman literature during the 15th-16th centuries was widely expressed in the works of the female writers who composed mainly love poetry. If the presence of the Sufistic patterns in Zeynep Hatun’s poetry is evident, yet, in this regard, we find ambiguity in Mihri Hatun’s works, the most famous female writer of the time (1460-1506 / 1509). It is noteworthy that often for writers, especially for Mihri Hatun, the Sufistic allegory was solely a means of expressing her own feelings hiding under the veil of religion in the conditions of ideological constraint.

## СУФИЙСКИЕ ОБРАЗЫ В ПРОИЗВЕДЕНИЯХ ОСМАНСКИХ ПОЭТЕСС XV-XVI вв. ОБЩИЙ ОБЗОР

(Резюме)

*Мелконян Мариам*

Суфийское направление, укоренившееся в XV-XVI вв. в османской литературе, нашло широкое выражение в основном в творчестве поэтесс, создающих произведения в рамках любовной тематики. Следуя литературным традициям того времени, османские поэтессы широко использовали суфийскую символику в своих произведениях, выражая идею абстрактной любви к Богу. Если в поэзии Зейнеб Хатун явно присутствуют суфийские мотивы, то, в произведениях самой известной поэтессы того времени Михри Хатун (1460-1506/1509) сталкиваемся с двоемыслием. Как поэзии Зейнеб Хатун, так и поэзии Михри свойственно употребление суфийских терминов, не только как способ аллегорического сравнения, но и как мастерский метод украшения стиха. В условиях идейной несвободы Михри Хатун выражала собственные чувства под прикрытием религиозной тематики.